ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 59/2

30-ը ապրիլի 2022 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

**Հաստատված է**

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի**

**2022թ. ապրիլի 30-ի նիստի թիվ 59/ 2 որոշմամբ**

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան**

# ԿԱՐԳ

# «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ

## *1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

1.1 Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) ուսանողների ինքնուրույն աշխատանքների նպատակը, խնդիրները, ձևերը և ինքնուրույն աշխատանքների կազմակերպչական- մեթոդական ապահովման սկզբունքները:

1.2 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և կատարման կարգը (այսուհետև՝Կարգ) մշակված է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրությունների, «ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» հիման վրա:

1.3 Ուսանողի ինքնուրույն աշխատանքը ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ է և պարտադիր է յուրաքանչյուր ուսանողի համար:

1.4 Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ծավալը ներառվում է կրթական ծրագրի յուրաքանչյուր դասընթացի ընդհանուր ժամաքանակի մեջ և հաշվարկվում է՝ համաձայն «ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի»:

1.5 Ինքնուրույն աշխատանքները.

- իրականացվում են ուսանողների կողմից ինքնուրույն՝ դասաժամերին և/կամ դասաժամերից դուրս,
- իրականացվում են անհատական և/կամ խմբային առաջադրանքներով,
- իրականացվում են լսարանային պարապմունքներին զուգահեռ և փոխհամաձայնեցված,
- ենթադրում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում,
- միտված են դասընթացի վերջնարդյունքների ձևավորմանը:

1.6 Ուսանողի ինքնուրույն աշխատանքի ձևերը որոշում են ամբիոնները համաձայն կրթական ծրագրի վերջնարդյունքների՝ պայմանավորված ուսումնասիրվող դասընթացների բովանդակությամբ, առանձնահատկություններով, նպատակների և խնդիրների բարդության աստիճանով:

1.7 Ինքնուրույն աշխատանքների ձևերը ամրագրվում են յուրաքանչյուր դասընթացի փաթեթում՝ ինքնուրույն աշխատանքներին նվիրված մեթոդական նյութերում:

1.8 Ուսանողի ինքնուրույն աշխատանքի կատարման տարրերն են՝ պլանավորումը, ինքնուրույն աշխատանքի իրականացումը, իրականացման վերահսկումը և գնահատումը, աշխատանքի վերլուծությունը և բարելավումը:

## *2. ՈՒՍԱՆՈՂԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ*

2.1.**Ինքնուրույն աշխատանքի նպատակն** է՝ նպաստել ուսանողների մոտ հիմնավոր մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների, հետազոտական և ստեղծագործական աշխատանքներ կատարելու փորձի ձևավորմանը, զարգացնել նրանց ինքնուրույնությունը, կազմակերպվածությունը և պատասխանատվությունը, ուսումնական և մասնագիտական խնդիրներ լուծելու ստեղծագործական ունակությունները:

2.2. **Ինքնուրույն աշխատանքի խնդիրներն են.**

- համակարգել և ամրապնդել ուսանողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները,

- ընդլայնել և խորացնել ուսանողների տեսական գիտելիքները,
- ուսանողների մոտ ձևավորել վերլուծական կարողություններ և հմտություններ,
- ուսանողների մոտ ձևավորել իրավական, նորմատիվային փաստաթղթերից, սկզբնաղբյուրներից և մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություններ,
- զարգացնել ուսանողների ճանաչողական ունակությունները և ակտիվությունը, ստեղծագործական նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և կարգապահությունը,
- ուսանողների մոտ ձևավորել ինքնուրույն մտածողություն և ինքնազարգացման, կատարելագործման, ինքնաիրացման ունակություններ,
- զարգացնել հետազոտական աշխատանքներ կատարելու կարողություններ:

**2.3. Ինքնուրույն աշխատանքի կատարման սկզբունքներն են.**

- **ինտերակտիվության սկզբունքը**, որով սահմանվում է ուսանողների համագործակցության և տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությունը ոչ միայն դասախոսի, այլև մյուս ուսանողների հետ,
- **կրթության անհատականացման սկզբունքը**, որը դրսևորվում է ինքնուրույն աշխատանքի իրականացման ընթացքում մանկավարժական աջակցության ժամանակ, երբ դասախոսի կողմից հաշվի է առնվում ուսանողի անհատական հոգեբանական բնութագրերը,
- **նույնականացման սկզբունքը**, որը հիմնավորում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը վերահսկելու անհրաժեշտությունը, որը կարևոր է տեխնիկական միջոցների (տեսակոնֆերանսի) օգտագործման դեպքում, առաջին հերթին հեռավար ուսուցման ժամանակ,
- **կրթության կարգավորման սկզբունքը**, որն արտացոլում է ուսուցման ռազմավարության ընտրության և ուսանողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման պլանավորման անհրաժեշտությունը (ներառյալ ուսանողների ինքնուրույն աշխատանքին վերաբերող մեթոդական մշակումները),

- **բազային գիտելիքների և հմտությունների վրա հիմնվելու սկզբունքը**, որը պահանջում է ուսանողի մոտ տվյալ դասընթացից նվազագույն գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև ազատ ժամանակը ռացիոնալ օգտագործելու ունակություն՝ ինքնուրույն աշխատանք կազմակերպելու համար,
- **առաջադեմ ուսուցման սկզբունքը**, որն ապահովում է ինքնուրույն աշխատանքի ուղղորդումը դեպի ուսանողի մտավոր գործունեության ակտիվացում և զարգացում, ինքնուրույն կանխատեսելու, ընտրելու և լուծելու ունակության ձևավորում,
- **հետադարձ կապի սկզբունքը**, որը թույլ է տալիս ինքնուրույն աշխատանքի մասնակիցներին ժամանակին քննարկել և դասախոսին ուղղել տվյալ դասընթացի խնդրահարույց հարցերը,
- **արտաքին վերահսկողության և ինքնագնահատման սկզբունքը**, որն ընդգրկում է տեղեկատվության փոխանակումը ոչ միայն դասախոսի, այլև տվյալ դասընթացի մեջ ընդգրկված այլ ուսանողների հետ,
- **գիտականության սկզբունքը**, որը պահանջ է դնում մասնակիցների առջև առաջադրանքները կատարել գիտական գիտելիքների ժամանակակից մակարդակով,
- **տեսանելիության սկզբունքը,** որը նախատեսում է տեղեկատվության ներկայացում մատչելի ձևով,
- **տեսության և պրակտիկայի միջև կապի սկզբունքը**, որը հնարավորություն է տալիս լուծել իրավիճակային խնդիրներ,
- **ուսանողի համար ընտրված ինքնուրույն աշխատանքի մատչելիության և իրագործելիության սկզբունքը**,
- **դասընթացների բեռնվածությունը հաշվի առնելու և ինքնուրույն աշխատանքի օպտիմալ պլանավորման սկզբունքը,**
- **գիտելիքների ամուր ձեռքբերում ապահովելու սկզբունքը:**

## *3. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ*

3.1. ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական գործընթացում կիրառվում է ինքնուրույն աշխատանքների իրականացման երկու տեսակ՝ լսարանային և արտալսարանային.

- **լսարանային ինքնուրույն աշխատանքն** իրականացվում է դասապրոցեսի ժամանակ՝ դասախոսի կողմից տրված անհատական առաջադրանքների և հանձնարարությունների տեսքով, որոնք վերահսկվում, ապա գնահատվում են։

- **արտալսարանային ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական կամ հետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է արտալսարանային ժամանակի հաշվին՝ դասախոսի առաջադրանքով, հանձնարարություններով և հսկողությամբ, բայց ոչ անմիջական ղեկավարությամբ. այդ աշխատանքները նույնպես կարող են գնահատվել։

3.2. Ուսանողի ինքնուրույն աշխատանքի ձևեր են.

- անհատական տնային առաջադրանքներ - որոշակի ժամանակահատվածում կոնկրետ թեմաների շրջանակներում տրված առաջադրանքների կատարում,
- դասընթացի ծրագրով նախատեսած գրականության ուսումնասիրություն և սեղմագրում, համառոտագրի կազմում,
- նախապատրաստում սեմինարներին, գործնական և անհատական պարապմունքներին, ելույթների, սեղմագրերի և պլանների կազմում,
- ուսումնական ծրագրերում ընդգրկված, բայց ուսումնական գրականության մեջ անբավարար լուսաբանված հարցերի ուսումնասիրում,
- հարցաթերթիկների և հարցազրույցի հարցերի կազմում,
- թեմայի վերաբերյալ խաչբառերի և դրանց պատասխանների կազմում,
- դիագրամների, նկարազարդումներ, գծագրերի, գրաֆիկների և աղյուսակների կազմում,
- թեստերի և դրանց պատասխանների կազմում,
- ռեֆերատի, հետազոտական և ավարտական աշխատանքի համար նյութերի ընտրություն,
- ուսանողական գիտական ընկերության գործունեության շրջանակներում կատարվող գիտահետազոտական աշխատանքի, զեկուցումների, տեղեկատվական հաղորդումների պատրաստում, հատուկ և գիտական պարբերական հրապարակումների վերլուծում,

- ռեֆերատի՝ երկրորդական տեքստի պատրաստում, որը բովանդակային նույնական է սկզբնաղբյուրի հետ, սահմանափակված փոքր ծավալով, սակայն մաքսիմալ ամբողջական ներկայացնում է սկզբնական տեքստը,
- էսսեի (փորձագրության) պատրաստում՝ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ սեփական կարծիքի կամ դիրքորոշման գրավոր շարադրում (քննադատական, փիլիսոփայական, գեղագիտական, գեղարվեստական, հրապարակախոսական գրականության ժանր, տեսակները՝ նկարագրական, պատճառահետևանքային, որոշող, համեմատող, փաստարկող, վերլուծող և այլն),
- նպատակների ծառի կառուցում - առաջադրանք, որը ներառում է խնդրի ընտրությունը, նպատակներին հասնելու ուղիները, աշխատանքի գնահատումը և առաջադրանքների վերահսկման ձևերը,
- տեսասահիկի պատրաստում - տրված խնդրի (առաջադրանքի) բանավոր ներկայացում սլայդների, տեսանյութերի և ուղեկցող այլ գործոնների տեսքով,
- իրավիճակային առաջադրանքներ՝ տարբեր իրավիճակների նկարագրություն և դրանց համար նախատեսված առաջադրանքներ,
- գործնական/բիզնես խաղեր- ցանկացած գործընթացի իմիտացիա, որն ուղղված է ուսանողների մոտ ապագա մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ հմտությունների զարգացմանը, պահանջում է նախնական պատրաստություն և ինքնուրույն կատարում ու ավարտ,
- խմբային նախագիծ/աշխատանք - առաջադրանքի, խնդրի իրականացում 3-5 ուսանողից կազմված խմբի կողմից,
- անհատական նախագիծ/աշխատանք – որևէ արդիական թեմայի վերաբերյալ հետազոտական նախագիծ մշակելու և իրականացնելու առաջադրանք՝ նախատեսված առավել պատրաստված ուսանողների համար,
- տերմինաբանական բառարանի կազմում – տվյալ (ուսումնասիրվող) թեմայի մեջ առկա տերմինների և հասկացությունների համառոտ բացատրություն,
- օտար լեզուներից թարգմանությունների կատարում,
- պրակտիկայի հաշվետվության կազմում և այլն:

## *4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ*

4.1. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը պլանավորվում է յուրաքանչյուր դասընթացի համար նախատեսված ժամային բեռնվածության հիման վրա՝ համաձայն ուսումնական պլանի:

4.2. Մեկ դասընթացից ինքնուրույն աշխատանքների թիվը և ձևերը որոշվում են դասախոսի կողմից և հաստատվում մասնագիտական ամբիոնում՝ նախապես հաշվարկելով դրանց իրականացման համար ուսանողին անհրաժեշտ մոտավոր բեռնվածությունը:

4.3. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ծավալը և բաշխումն ըստ առանձին տեսակների պետք է արտահայտվեն առարկայական օրացուցային կամ թեմատիկ պլաններում:

4.4. Ուսանողի ինքնուրույն աշխատանքին հատկացված ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի 15 ակադեմիական ժամ բեռնվածությունը ուսումնական շաբաթվա համար:

4.5. Գործող օրացուցային-թեմատիկ պլանների հիման վրա դեկանատները և ուսումնական բաժինը կազմում են դասախոսի ղեկավարությամբ իրականացվող ուսանողների ինքնուրույն աշխատանքի (անհատական պարապմունքների) իրականացման գրաֆիկ:

4.6. Ամբիոնի և դասախոսի կողմից ինքնուրույն աշխատանքի պլանավորումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- ուսումնական գործընթացում դասավանդման որակը բարձրացնող ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ ուսանողի համար նյութի յուրացումը ավելի դյուրին դարձնելու և իրեն ավելի հարմար պահին օգտագործելու նպատակով,
- համակարգչային թեստավորման կիրառում,
- սեմինար և գործնական պարապմունքների, ուսանողների հետազոտական աշխատանքի, արտադրական պրակտիկայի անցկացման մեթոդիկայի կատարելագործում,

- հետազոտական և ավարտական աշխատանքների պլանավորման և կատարման համակարգերի կատարելագործում՝ այդ աշխատանքներում ուսանողի դերը բարձրացնելու նպատակով:

4.7. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովմանը և բարելավմանն ուղղված աշխատանքները պետք է արտահայտվեն դասախոսների անհատական պլաններում:

## 5. *ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ*

5.1. Ուսանողների կողմից ինքնուրույն աշխատանքների կատարման, ըստ դասավանդվող առարկաների առանձնահատկությունների ձևերի և մեթոդների ընտրության պատասխանատվությունը կրում են ամբիոնները:

5.2. Ուսանողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար պետք է հստակ ձևակերպել աշխատանքի նպատակներն ու խնդիրները, ինքնուրույն աշխատանքի ակնկալվող արդյունքները, ձեռքբերած գիտելիքների, հմտությունների, մասնագիտական կարողությունների ստուգման ձևերը:

5.3. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը պետք է ապահովված լինի.

- անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներով (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, անհատական առաջադրանքների փաթեթներ, տեղեկատուներ, ուսուցանող ծրագրեր, կիրառական ծրագրային փաթեթներ և այլն),
- մեթոդական նյութերով (ցուցումներ, պրակտիկումներ և այլն),
- ստուգող նյութերով (թեստեր, հարցաշարեր և այլն),
- նյութական ռեսուրսներով (համակարգիչներ, տպող և բազմացնող սարքեր և այլն),
- դասախոսի խորհրդատվություններով,
- ուսանողի կողմից ինքնուրույն ստացած տեսական կամ գործնական արդյունքների հրապարակային քննարկման հնարավորությամբ (ներկայացումներ, կոնֆերանսներ, օլիմպիադաներ, մրցույթներ և այլն):

5.3. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի պլանավորումն ու իրականացումը ապահովում են Մասնաճյուղի Կրթական բարեփոխումների և դասախոսների

վերապատրաստման (այսուհետև՝ ԿԲԴՎ) բաժինը, դեկանատները, ամբիոնները և կրթական ծրագրերի ղեկավարները, դասախոսները:

**5.4. ԿԲԴՎ բաժինը.**

- անց է կացնում հանդիպումներ, քննարկումներ, խորհրդատվություններ պրոֆեսորադասախոսական կազմի հետ՝ ուսանողի ինքնուրույն աշխատանքի կատարման մեթոդական աջակցության հարցերի վերաբերյալ,
- մշակում է ինքնուրույն աշխատանքի կատարման տեսակների և ձևերի վերաբերյալ ուղեցույցներ և առաջարկությունների փաթեթ, ներկայացնում է առաջարկություններ սովորողի ինքնուրույն աշխատանքի որակի բարելավման համար՝ հիմնվելով սովորողների առաջադիմության վերլուծության վրա:

**5.5. Դեկանատները.**

- վերահսկում են ամբիոններում ուսանողների ինքնուրույն աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը,
- համակարգում են ֆակուլտետներում ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման աշխատանքները, ամբիոնների հետ համաձայնեցնում են իրականացվող առաջադրանքների ծավալները և կատարման ժամկետները, պլանավորվող աշխատանքների և ստուգումների քանակները,
- հետևում են ուսանողների անհատական պարապմունքների գրաֆիկների պահպանմանը:

**5.6. Ամբիոնները և կրթական ծրագրերի ղեկավարները.**

- ապահովում են դասախոսությունների, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքների և ինքնուրույն աշխատանքների ժամային արդյունավետ փոխհարաբերակցությունը,
- մեթոդական օգնություն են ցուցաբերում ուսանողներին՝ ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու գործում,
- մշակում են ուսանողների ինքնուրույն աշխատանքին նվիրված նորմատիվային փաստաթղթերը,

- որոշում են ուսանողների ինքնուրույն աշխատանքի հիմնական ուղղությունները, բովանդակությունը, ձևերը և մեթոդները,
- վերահսկում են դասավանդվող առարկաների ապահովվածությունը դասագրքերով և ուսումնական ձեռնարկներով,
- մշակում են ուսումնամեթոդական փաթեթներ, ծրագրեր, ձեռնարկներ, նյութեր, դասագրքեր՝ տպագիր և էլեկտրոնային տեսքով՝ համաձայն կրթական ծրագրի,
- մշակում են առաջադրանքներ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար,
- ապահովում են ինքնուրույն աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը ամբիոնների բոլոր առարկաների համար,
- վերահսկում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման կազմակերպումը և որակը,
- մշակում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների գնահատման սանդղակներ՝ բոլոր տիպի աշխատանքների համար,
- վերլուծում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետությունը, կատարում փոփոխություններ դրանց կազմակերպման գործընթացում:

**5.7. Դասախոսները.**

- պլանավորում են ինքնուրույն աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ժամաքանակը,
- որոշում են առաջադրանքների ձևերը և թեմաները, ուսանողների ինքնուրույն աշխատանքների արդյունքների ներկայացման ժամկետները,
- նախապատրաստում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական նյութերը,
- անցկացնում են խորհրդատվություններ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքներին վերաբերվող հարցերի շուրջ:

**5.8. Մասնաճյուղի ստորաբաժանումների աջակցությունն ուսանողների ինքնուրույն աշխատանքների իրականացմանը.**

- գրադարանն ապահովում է ինքնուրույն աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ուսումնական, մեթոդական, գիտական, պարբերական, տեղեկատվական և գեղարվեստական գրականության հասանելիությունը, այդ թվում նաև էլեկտրոնային կրիչներով,
- ստորաբաժանումները ուսանողներին տրամադրում են իրենց տնօրինության տակ գտնվող ինքնուրույն աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ գիտական, գիտամեթոդական, ուսումնական և այլ նյութերը,
- տրամադրում են խորհրդատվություն՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքների տեղեկատվական և մեթոդական ապահովման ուղղությամբ:

## *6.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

6.1. Ուսանողների կատարած ինքնուրույն աշխատանքի ստուգման ձևերն են.

- բանավոր հարցումը,
- ստուգողական աշխատանքը,
- տնային առաջադրանքների ստուգումը,
- էսսեների ներկայացումը,
- օտար լեզուներով տեքստերի թարգմանությունների ստուգումը,
- զեկուցումները,
- ռեֆերատների, հետազոտական աշխատանքների, ավարտական որակավորման աշխատանքների պաշտպանությունը,
- ընթացիկ ստուգումները և քննությունները,
- ստուգարքները և քննությունները
- և այլն:

6.2. Ինքնուրույն աշխատանքի ստուգումներն իրականացվում են «ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» համաձայն:

## *7. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ*

7.1. **Ուսանողները ինքնուրույն աշխատանք կատարելուց պարտավոր են.**

- ծանոթանալ ուսումնական պլանում ընդգրկված դասընթացների համար նախատեսված ինքնուրույն աշխատանքների տեսակներին և ձևերին, ներկայացվող պահանջներին և նորմերին,

- ճշտել դասախոսների հետ տվյալ առարկայի ուսումնասիրման համար անհրաժեշտ ինքնուրույն աշխատանքի ծավալները և ներկայացման ժամկետները,
- ուսումնասիրել ամբիոններում մշակած ինքնուրույն աշխատանքների անցկացմանը նվիրված մեթոդական փաթեթները, ձեռնարկները և այլ նյութերը,
- ինքնուրույն աշխատանքներ կատարելիս ուսումնասիրել տվյալ հարցին վերաբերող տպագիր և էլեկտրոնային վերջին նյութերը,
- հաստատված ժամկետներում դասախոսին ներկայացնել կատարված ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

7.2. **Ուսանողներն ինքնուրույն աշխատանք կատարելու համար իրավունք ունեն.**

- օգտվելու գրադարանային ֆոնդում գտնվող դասագրքերից, մենագրություններից և այլ նյութերից, կենտրոններում, ամբիոններում առկա գրականությունից, մեթոդական նյութերից, գործնական և լաբորատոր աշխատանքների ձեռնարկներից և այլ անհրաժեշտ նյութերից,
- օգտվելու Մասնաճյուղի համակարգչային սրահներից՝ համացանցից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով,
- դիմելու դասախոսներին՝ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- դասախոսների, ամբիոնների վարիչների միջամտությամբ Մասնաճյուղի ղեկավարությունից ստանալ ուղղորդող փաստաթղթեր՝ այլ կազմակերպություններում հարցումներ, հետազոտություններ և այլ աշխատանքներ կատարելու թույլտվություն ստանալու նպատակով:

## *8. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ*

8.1. Սույն կարգը հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը:

8.2. Կարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել Մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ՝

8.2.1. Մասնաճյուղի տնօրենի,

8.2.2. Գիտական խորհրդի անդամների,

8.2.3. Որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկությամբ: